ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ ԷԴՄՈՆԴ ՇՅՈՒՅԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

1996 թ. նոյեմբերի 1-ին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, նվիրված ՀՀ Ակադեմիայի արտասահմանյան անդամ, հունգարացի ականավոր գիտնական, նշանավոր արևելագետ ու հայագետ էդմոնդ Շյուցի ծննդյան 80-ամյակին։ Բացելով նիստը Ակադեմիայի պրեզիդենտ Ֆ. Սարգսյանն ասաց. Ակադեմիայի հրավերով այսօր մեզ հետ է մեր Ակադեմիայի արտասահմանյան անդամ էդմոնդ Շյուցը։ Անգնահատելի է նրա դերը հայագիտության զարգացման գործում։ Լինելով մեր ժողովրդի պատմության ու մշակույթի լավագույն գիտակներից մեկը, նա մեծ ջանքեր է գործադրում միջազգային և հատկապես Հունգարիայի գիտական հասարակայնությանը ծանոթացնելու համար հայ ժողովրդի դարավոր պատմության ու մշակույթի հետ։

Ցանկանալով հյուրին ամենայն հաջողություն և արդասավոր գիտական գործունեություն, պրեզիդենտը զեկուցման համար խոսքը տալիս է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանին։

Ականավոր պատմաբան ու բանասեր, գիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ էդմոնդ Շյուցի անունը լայնորեն հայտնի է ինչպես Հունգարիայում և Հայաստանում, այնպես էլ արտասահմանի շատ երկրներում, ասաց զեկուցողը։

Է. Շյուցը ծնվել է Բուդապեշտում, մտավորականի ընտանիքում։ Ստանալով պատմաբանի ու բանասերի մասնագիտություն նա հաջողությամբ զբաղվում է ինչպես Հունգարիայի, այնպես էլ Գերմանիայի, Հարավային Ռուսաստանի ու Հյուսիսային Կովկասի հին քոչվոր ցեղերի (հոներ, ալաններ, խազարներ) պատմության հարցերով։ Պրոֆեսոր Է. Շյուցը հանգամանորեն ուսումնասիրել է նաև միջնադարում Արևելյան Եվրոպայի երկրներում հիմնված հայկական գաղթավայրերի պատմաէթնիկական ու լեզվամշակութային հարցերը։

Հունգար հայագետը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել զիչաղիրների պատմության հարցերին։ Եվ դա պատահական չէ։ Հայագիտության համար կարևոր նշանակություն ունի հայկական տառերով գրված օսարալեզու բնագրերի ուսումնասիրության հարցը։ Այդ խնդրին Է. Շյուցը նվիրեց փայլուն հոդվածներ ու աշխատություններ։ Մի շարք հոդվածներից դատ անվանի գիտնականը հրատարակել է «Հայ-զիչաղ մի տարեգրություն...» արժեքավոր աշխատությունը, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց պատմաբանների, հատկապես հայագետների, սլավոնագետների և թուրքագետների շրջանում։ Հայ-զիչաղ այդ տարեգրությունը, իր ցի ռազմաքաղաքական իրադարձություններից, հարուստ տեղեկություններ է պարունակում նաև տեղի հայության առևտրատնտեսական կյանքի վերաբերյալ։ Գիտնականը շնորհակալ գործ է կատարել նաև զիչաղների քերականության ուսումնասիրության ուղղությամբ։

Մեծ է է. Շյուցի մանկավարժական վաստակը։ Երեք տասնամյակից ավելի է, որ նա Բուդապեշտի համալսարանի կովկասագիտության բաժնում արևելագիտություն և հայագիտություն է դասավանդում, հայոց լեզվի դասընթացներ վարում։

է. Շյուցը դրսաշխարհի ամենից գործունյա և ճանաչման արժանացած հայագետներից է։ Նա հայոց պատմության ու մշակույթի յուրօրինակ քարոզիչն է արտասահմանում։ Շյուցը գործուն մասնակցություն է ունեցել հին և միջնադարյան Հայաստանի պատմության, լեզվի և գրականության հարցերին նվիրված շատ միջազգային գիտաժողովների։

Հունգարիայի և Հայաստանի Գիտությունների Ակադեմիաների միջև քառորդ դարից ավելի է, ինչ երկկողմանի պայմանագրով ստեղծվել է լայն համագործակցություն։ Հասարակական գիտությունների ասպարեզում փոխշահավետ այդ համագործակցությունն իր մարմնավորումը գտավ համատեղ ուժերով իրականացված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» ստվարածավալ ժողովածուի հրատարակությամբ (1983 թ.)։ Ժողովածուն բացվում է է. Շյուցի ընդարձակ հոդվածով։ Ժողովածուի ստեղծման գաղափարը, դրրի պատրաստումն ու հրատարակումը իրականացել է նրա ջանքերի շնորհիվ։

Նկատի ունենալով հայագիտական մեծ վաստակը, ՀՀԱԱ 1990 թ. է. Շյուցին ընտրեց Ակադեմիայի արտասահմանյան անդամ։

Վերջին տարիներին ևս նա երիտասարդական ավյունով շարունակում է հայագիտական իր գործունեությունը։ Հիշատակության արժանի են հատկապես «Հայագիտության նշանակությունը Հունգարիայի պատմության համար» (1991 թ.), «Կիլիկյան Հայաստանը և խաչակիրները» (1995 թ.), «Պատմական և գրականագիտական զուգահեռներ միջնադարյան Հայաստանում և Հունգարիայում» (1996 թ.), «Ամստերդամի հայկական տպարանի հունգար տպագրիչը» (1996 թ.) ծավալուն հոդվածները և այլն։

Ականավոր գիտնական էդմոնդ Շյուցին մաղթում ենք քաջառողջություն և նոր հաջողություններ։

Էդմոնդ Շյուցի անունը,—ասաց ՀՀԱԱ ակադեմիկոս Գ. Գալոյանը,—չի կարելի տալ առանց խոր ակնածանքի։ Նա մեկն է եվրոպական երկրների ոչ մեծ թվով այն հայագետներից, որոնք պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, հայերենի խոր իմացությամբ պրոպագանդում են հայ մշակույթը, այլև իրենց անգնահատելի ավանդն են ներմուծում հայագիտության զարգացման գործում։ Նա հայ մշակույթի դեսպանն է Հունգարիայում և հունգար մշակույթինը՝ Հայաստանում։ Կամրջելով մեր երկու ժողովուրդների գրական ու պատմական կապերը, նա ջանք չի խնայում հունգարական աղբյուրները ծառայեցնելու հայագիտության զարգացմանը։ Ավելի քան երկու տասնամյակ է, ինչ ՀՀԱԱ և Հունգարիայի Ակադեմիայի միջև գիտական բեղմնավոր կապեր են իրականացվում։ Էդմոնդ Շյուցի ծառայությունները շատ մեծ են դրանում։ Գնահատելի են նրա ձգտումներն ու ջանքերը՝ Հունգարիայում երիտասարդ հայագետներ պատրաստելու ուղղությամբ։

Իր պատկառելի տարիքը չի խանգարում նրան՝ երիտասարդական ավյունով շարունակելու հայագիտական պրպտումները։ Ես ցանկանում եմ քաջառողջություն մեծ հայասերին ու հայագետին և մեծ հաջողություններ նրա ստեղծագործական ծրագրերի իրականացման գործում։

«Պատմա-բանասիրական հանդես» խմբագրական խորհրդի և աշխատակիցների կոլեկտիվի կողմից շնորհավորում եմ ականավոր գիտնական, արևելագետ և հայագետ էդմոնդ Շյուցի ծննդյան 80-ամյակը։ Մենք հին ծանոթներ ու բարեկամներ ենք,—ասաց ՀՀԱԱ «Հանդես» խմբագիր, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։—Դեռ տասնյակ տարիներ առաջ անվանի պատմաբանի ու բանասերի հոդվածը հրապարակվեց մեր «Հանդեսում»։ Դեռ շատ տարիներ առաջ «Հանդեսը» հատուկ հոդված նվիրեց Շյուցի գիտական գործունեությանը։ Մենք հույս ունենք, որ նա այսօր և ապագայում էլ նորից կաշխատակցի մեր պարբերականին։ Անվանի գիտնականի ուսումնասիրություններն ու հոդվածները աչքի են ընկնում իրենց խորությամբ ու ինքնատիպությամբ։ Այդպիսիների թվին են պատկանում նաև այն աշխատությունները, որոնք նվիրված են հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերին։ Շյուցը անգնահատելի դեր խաղաց մասնավորապես միջնադարում Արևելյան Եվրոպայում հաստատված հայ գաղթավայրերի պատմության լուսաբանման գործում։ Շնորհավորելով Հայաստանի Ակադեմիայի արտասահմանյան անդամ էդ. Շյուցի ծննդյան 80-ամյակը, ցանկանում ենք նրան երկար տարիների առողջություն և նորանոր հաջողություններ իր փայլուն գործունեության մեջ։

Ամբողջ սրտով ու երախտագիտությամբ ողջունում ենք մեր ժողովրդի անկեղծ բարեկամ, Հայաստանի Հանրապետության Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ, պրոֆեսոր

Էդմոնդ Շյուցին՝ նրա ծննդյան 80-ամյակի առթիվ,—ասաց ԳԱԱ ակադեմիկոս Վ. Նալբանդյանը։—Հայ գիտական հասարակայնությունը շնորհակալությամբ գլուխ է խոնարհում մեր սիրելի գործընկերոջ պատկառելի վաստակի առաջ, որը ահա մի քանի տասնամյակ է, ինչ գիտական բարձր մակարդակով, բացառիկ ավյունով ու անմնացորդ նվիրումով աշխարհի ժողովուրդներին հաղորդակից է դարձնում հայոց պատմության, մեր ազգային հոգևոր մշակույթի անանց արժեքներին՝ վերստին ու կրկին շեշտելով նրանց նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության առաջընթացի տեսակետից։

Ջերմորեն ողջունելով մեր սիրելի հոբելյարին, մաղթենք նրան քաջառողջություն, արևշատություն, անձնական երջանկություն, նորանոր հաջողություններ՝ նրա հայանպաստ բեղմնավոր գործունեության մարզում։

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը ընդգծեց, որ Էդմոնդ Շյուցի անունը հայտնի է որպես հայագիտության նրախտավորի, նա ոչ միայն հիանալի տիրապետում է հայոց լեզվին, այլև ակտիվորեն մասնակցում հայ-հունգարական բարեկամական կապերի ամրապնդման գործին։ Մոտ 30 տարի նա արտասահմանյան երկրների հետ բարեկամության և համագործակցության Հայկական ընկերության համակարգում գործող «Հայաստան—Հունգարիա» ընկերության անդամ է։ Մեծ ծառայություն ունի «Հունգարիա—Հայաստան» ընկերության ստեղծման և նրա տպագիր օրգան՝ «Արարատ» հանդեսի հրատարակության գործում։ Շյուցը Երևանում գործող Շանդոր Պետեֆիի բարեկամների ակումբի պատվավոր անդամ է։ Վերջերս նրա ծննդյան 80-ամյակի օրերին «Հայաստան—Հունգարիա» ընկերության նիստում նա հանդես եկավ հայոց լեզվի մասին հետաքրքիր զեկուցմամբ։ Պատմեց այդ ուղղությամբ Հունգարիայում կատարված աշխատանքների մասին։ ՀՀ ԳԱԱ Գիտական տեղեկատվության կենտրոնը հրատարակել է Շյուցի մատենագիտությունը և նրա հայագիտական աշխատությունների ժողովածուն, այժմ էլ պատրաստում է նրա հայագիտական անտիպ գործերի ժողովածուն։

Այսօր ինձ երջանիկ առիթ և պատեհություն է վիճակվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ողջ ուսանողության անունից ջերմորեն շնորհավորել Ձեր ծննդյան 80 և հայագիտական գործունեության 50-ամյակի առթիվ,—իր ելույթում ասաց Համալսարանի պրոֆեսոր Բ. Հարությունյանը։ Հայ պատմիչների երկերը, հայկական բազմաթիվ այլ աղբյուրներ, մասնավորապես հայատառ զիչաղական ձեռագրերը դարձել են Ձեր բազմաբնույթ ուսումնասիրությունների աղբյուրագիտական հիմքը՝ լուսաբանելու կամ քննելու համար քոչվորական, մասնավորապես հունգարական ցեղերի պատմության այլևայլ խնդիրները և շատ ու շատ այլ հարցեր։ Մեծ և անուրանալի են Ձեր ծառայությունները զուտ հայագիտական խնդիրների ուսումնասիրության բնագավառում։ Շնորհավորելով Ձեզ ծննդյան 80-ամյակի առթիվ, ցանկանում ենք քաջառողջություն, երջանկություն, ստեղծագործական երկար և բեղուն կյանք և մարդկային ամենայն բարիք։

Մատենադարանի ղեկավարության և կոլեկտիվի անունից ելույթ ունեցավ պատմ. գիտ. դոկտոր Վ. Գրիգորյանը։ Ակադ. Էդ. Շյուցը Հայաստանում իր հայագիտական աշխատանքները սկսել է Մատենադարանում և երկար տարիներ եղել մեր ընթերցողը։ Մեր գրադարանին նա նվիրել է իր բոլոր գիտական հրատարակությունները, որոնք հայագիտական և արևելագիտական մնայուն աշխատություններ են։ Դրանց մեջ կուզենայի առանձնացնել նրա զիչաղական հետազոտությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն այդ մեռած լեզվով գրված սկզբնաղբյուրների, այլև Ղրիմում և Լեհաստանում հաստատված հայ գաղթականների պատմության հետազոտման համար։ Շյուցը զբաղվել է նաև Ամստերդամի հայ տպագրության պատմությամբ, գրել է միջնադարյան հայ գրականության համաբարբառի, Սեբեոսի պատմության, Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրության և այլ հարցերի մասին։ Նրա ուսումնասիրությունները նոր խոսք են գիտության մեջ։

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Միքայելյանն ասաց.—Ակադեմիկոս Շյուցը եվրոպական դասական հայագիտության նշանավոր ներկայացուցիչներից է։ Լայն ու բազմազան է նրա հայագիտական ուսումնասիրությունների շրջանակը՝ հայ ժողովրդի պատմության միջնադարյան շրջանի խնդիրներ, բանասիրություն-տեքստաբանություն, հայ-զիչաղական առնչակցություններ, լեզվաբանություն։ Նշված բնագավառներում Շյուցի կատարած ցանկացած աշխատանքը նոր խոսք է հայագիտության մեջ, խթանում է շատ հարցերի նորովի մեկնաբանմանը։ Հարգելի պրոֆեսորի գիտական հետազոտությունների բարձր մակարդակի նախապայմաններից մեկը նրա լեզվական հարուստ գիտելիքներն են, մի շարք լեզուների իմացությունը։

Ջերմորեն շնորհավորելով հորելյարին՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն, բանասիր. գիտ. դոկտոր Ս. Հարությունյանը մասնավորապես ասաց. ակադեմիկոս Էդմոնդ Շյուցի հետ ծանոթացել եմ տակավին 1960-ական թթ. կեսերին, երբ նա հետազոտական նպատակներով առաջին անգամ այցելեց Երևան իր տիկնոջ հետ։ Այնուհետև, իրերի բերումով, նրանց ուղեկցեցի Թրիլիսի՝ ծանոթացնելով տեղի հայկական պատմական ու մշակութային արժեքներին, որոնց նրանք վերաբերվում էին բացառիկ ուշադրությամբ և ակնածանքով։ Հետագայում պրոֆեսոր Շյուցը քանիցս վերայցելեց Երևան, գիտական նորանոր աշխատանքներով առավել խորացնելով հայ-հունգարական պատմական կապերի ուսումնասիրությունը։ Էդմոնդ Շյուցը ոչ միայն մեզանում, այլև Հունգարիայի գիտական շրջաններում վայելում է բացառիկ հեղինակություն։

Մեծ գիտնականի աշակերտների անունից խոսք ասաց Անահիտ Սիմոնյանը։ Էդմոնդ Շյուցը անվանի գիտնական է ոչ միայն Հունգարիայի պատմության, հայագիտության, այլև թուրքագիտության, արևելագիտության, համեմատական լեզվաբանության բնագավառներում։ Նրա անունը հայտնի է ոչ միայն Հունգարիայում և Հայաստանում, այլև աշխարհի շատ հայագիտական կենտրոններում։ Պրոֆեսոր Շյուցի շնորհիվ և նրա միջոցով հայ ժողովրդի պատմությունը, լեզուն և մշակույթը տասնամյակներ շարունակ ներկայացվել են հունգար ժողովրդին։ Նրա ղեկավարությամբ աճել է հունգարացի հայագետների սերունդ, որն այսօր էլ իր նշանակալի ներդրումն է կատարում երկու ժողովուրդների մշակույթների փոխհարստացման գործում։ Այսօր արժանվույնը պետք է մատուցել նրա սաներից մեկին՝ Պալ Սալմաշիին, իր կատարած անգնահատելի թարգմանչական և գրականագիտական գործունեության համար, որի շնորհիվ հայ գրականությունը ներկայացվեց տարբեր ժողովածուներում և անթողդիաներում։ Հունգարիայում ազգային գարթոնք ապրող հունգարահայ գաղութը սկսեց հրատարակել «Արարատ» երկլեզու շաբաթաթերթը, որի մշտական հեղինակներից և թղթակիցներից են Շյուցի սաները՝ Սալմաշի Պալը, Կրայչիր Պիրոշկան ու հունգարահայ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ։

Նիստի վերջում ելույթ ունեցավ հորելյարը։ Մեծ պատիվ եմ համարում ինձ համար,— ասաց նա,— որ միջազգային բազմաթիվ գիտաժողովներում ներկայացնում եմ հայագիտությունը։ Առանց հայ ժողովրդի, աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի պատմության ուսումնասիրման, անհնարին կլինի գաղափար կազմել արևելյան քաղաքակրթության մասին, առանց հայկական աղբյուրների չի կարելի ամբողջացնել Մերձավոր Արևելքի, Փոքր Ասիայի և Կովկասի բազմադարյան պատմությունը։ Շատ դժվար է պատկերացնել, թե ինչպես պետականությունից վաղուց զրկված, օտար բարբարոս տիրապետության տակ ընկած մի ժողովուրդ կարողացել է սնվել և պահպանել այդպիսի հսկայական գրականություն, մեծ պատմագրություն, որը կարող է շարժել շատ և շատ ժողովուրդների բարի նախանձը։

Հայագիտական մեր աշխատանքները Հունգարիայում նպատակ ունեն ոչ միայն մեծացնել հետաքրքրությունը հայոց պատմության և հայ մշակույթի նկատմամբ, այլև ավելի ամրապնդել հայ և հունգար ժողովուրդների բարեկամությունը, որի ակունքները գնում են դեպի դարերի խորքը։ Իմ կատարածը համարում եմ ոչ շատ, այդ պատճառով էլ անգամ առաջացած տարիքիս խոստանում եմ ինձ համար նվիրական այս ասպարեզում գործադրել ամենայն ջանքեր։

Ն. Դ.